շաւեց Թուրքաց երկիրը, նուաճեց Բալանջար եւ նորա ամրոցները, հալածեց Թուրքերին եւ նետեց նոցա ծովը, գաղթեցնելով բնակիչների մի մասը։

105 Թ. Ջարրահ արշաւեց Ալանաց վերայ, հանելով մինչեւ Բալանջարի մօտ գտանուող քաղաքները եւ բերդերը, որոնցից մի քանիսը նա նուաճեց եւ գաղթեցրեց բնակիչների մի մասը։

106 Թ. Հաջջաջ ի. Աբդուլմալիք արշաւեց Ալանաց վերայ, որոնք հպատակեցան նորան հարկ տալու հիման վերայ։

110 Թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք արշաւեց Թուրքերի վերայ։ Անցնելով Ալանաց Դռնից, նա պատահեցաւ խաքանին եւ՝ չնայելով նորա զօրքի բազմութեանն՝ պատերազմեցաւ նորա հետ գրեթէ մի ամիս. Ասուած ի վախուստ դարձրեց խաքանին։

111 Թ. Թուրքերը արշաւեցին Ատրպատական, սակայն Հարաղ ի. Ամր յետ մղեց նոցա։

111 Թ. Հիշամ նշանակեց Ջարրահ ի. Աբդուլլահ Հակամիին կառավարիչ Հայաստանի վերայ։

112 Թ. Թուրքերը ներս խուժեցին Ալանաց Դռնից։ Ջարրահ ի. Աբդուլլահ Հակամի Ասորիքի եւ Ատրպատականի ժողովրդից բաղկացած գնդով՝ թէեւ թուով ոչ լիակազմ՝ ճակատեցաւ նոցա հետ եւ նահատակեցաւ իւրայիններով Արտաւիլի դաշտում։ Նորա տեղ կառավարեց նորա եղբայր Հաջջաջ ի. Աբդուլլահ Հայաստանի վերայ։

113 Թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք նուաճեց խաքանի իշխանութեան տակ գտանուող քաղաքները եւ բերդերը, ոմանց սպանեց, ոմանց գերեց։

115 Թ. Հիշամ դրեց Մրբուան ի. Մուհամմեդին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։